կար։ Երբ ղուզք և քուրտք Հայոց վրայ հարուած բերին, պատրիարքն Թողուց զԵգիպտոս և ելաւ գնաց յԵրուսաղէմ, հետը տանելով 75 Սուրբ Գիրք, որոց մէջ կար և օրինակ մի չորից Աւետարանաց պէսպէս գոյներով և ոսկւով՝ պայծառազարդ պատկերօք հրաշագործութեանց Քրիստոսի, որ փառաւորեալ ըլլայ»։

«Պատրիարքին ճամբորդութիւնն սկսաւ չաբաթ օր Հատուր ամսոյ 15ին (Նոյեմբեր), Մարտիրոսաց 888 թուին (1172 Քրիստոսի), որ համեմատի Հիճր. 569 տարւոյ Ռապի Էվվէլ ամսոյ 23ին։ Կ'ըսուի, թէ Երուսաղէմէն դուրս վանք մը չինեց. եկեղեցի մ'այլ յանուն Ս. Սարգսի, سركيس որ է նոյն Ապու Սիրճա ابو سرجه կոչուածն. և այս եկեղեցւոյս փոխադրեց բոլոր սեղանոյ սպասքն և ոսկի դահեկանքն. կ'ըսուի այլ թէ 20 միանձունք կային այս վանաց մէջ»։

«Պատրիարքն իրեն փոխանորդ քահանայ մի Թողուց ի Դահիրէ, անոր որդւոյն հետ, որ ժամասացութիւն և պատարագ կատարեն ըստ պատշաճ ժամանակի, Յովհ. Մկրտիչի եկեղեցւոյն մէջ, որ ի Հարա Զաւիլա՝ անարատ Տիրամօր մատրան (եկեղեցւոյ) վրայ շինուած է, ինչպէս առաջ ըսինք. այս եկեղեցւոյ մէջ ժողովէին ընկերութիւն մի Հայոց՝ արանց և կանանց։ Իսկ ասոնց ունեցած վանքն եկեղեցիներով մէկտեղ՝ ամայի Թողուեցան, և դռներն այլ փակուեցան։ — Երբ լուր եղաւ որ պատրիարքն յԵրուսաղէմ եկաւ հասաւ անվտանգ, բոլոր քրիստոնեայք ընդ առաջ գնացին իրեն ուրախութեամբ և խնդութեամբ, հանդերձ սաղմոսերգութեամբ, և առջևնէն խաչեր և վառած ջահեր տանելով և բուրվառներով խնկելով։ — Ասկէ վերջը պատրիարքն հանգիստ ապրեցաւ քիչ մ'ատեն, և ապա հանգեաւ ի չնորհն Աստուծոյ, որ գովեալ ըլլայ, Տուրի ամսոյ հինգին (որ համեմատի Դեկտ. 27-յանուար. 25). ի նոյն վերոյիշեալ տարին, և Թաղուեցաւ ի վանս Ս. Յակոբայ Զեբեդեան յԵրուսաղէմ։ — Սա ազնուաբարոյ անձ մի էր, գեղեցիկ տեսքով, վայելուչ հասակաւ. երեսքն մօրուօք մռուզօք պատած, որ ալևորած էին, և տարւօքն այլ իբրև ութսունամեայ էր»։

«Կ'ըսուի թէ յԵրուսաղէմ նստող հայ եպիսկոպոսն՝ տեսնելով որ ամենքն կ'երթան տեսնուելու այս սուրբ պատրիարքին հետ, իր ազնուական բարուց համար, նախանձելով վրան՝ թոյն խմցուց, եւ մահը պատճառեց։ Բայց Աստուած յաջողութիւն